

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

19-րդ. դարոյի ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Առաջին երեսնամեակ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱՄԴԱՐԵԱՆԸ ¹⁾ (1796 սեպտ. 25—1834 թ. մայիս) ծնուած է Աստրախանում: Այստեղ 1810 թ. քաջուած է Աղաբաբեան զպրօքը, ուր և ուսում է առնում նա և այնուհետեւ աշակերտում է Սերովքէ վարժապետ Պատկանեանին: Նոր ձեռի զպրօքը տալիս է նրան լաւ կրթութիւն, իսկ Սերովքէ վարժապետը, որ իր ժամանակին գիտնականի համբաւ ունէր և միաժամանակ պարապում էր ոտանաւորներ գրելով, անպայման քանաստեղծութեան սէր է զարթեցրել իւր աշակերտի մէջ և ոտանաւոր գրելու արուեստը սովորեցրել նրան: Այամդարեանը տասնեօթնամեայ պատանեկան հասակում ամուսնանում է և մի տարի յետոյ, 1814 թուին փոխադրուելով Մոսկուա՝ վարում է քարտուղարի պաշտօն Լազարեանների մօտ, ապա և ուսուցչութիւն է անում Լազարեան ճեմարանում (քաջուած 1816 թ.) և Թարգմանութիւններով պարապում: Լազարեան ճեմարանում վարած պաշտօնը լրացնում է նրա ուսման թերին:

1821 թուին Այմադարեանը, որ արդէն քահանայ էր ձեռնադրուած, կրում է իւր կեանքի ամենամեծ դժբախտութիւնը. մեռնում է նրա կինը, սիրած ու պաշտած: Սիրելի մահը ցնցում է քսան և հինգամեայ երիտասարդի ներքին աշխարհն ամբողջապէս և ստիպում է նրան իր միջնորդութիւնը գտնել քանաստեղծութեան մէջ: Խորին վիշտը, կարծես, զար-

1) Յարութիւն վարդապետի Այամդարեան «Չափաբերակներ», Ս. Պետերբուրգ, 1884:—Համառօտ Պատմ. ներսիսեան Հոգեւոր Դպրոցի, Ստ. Մալխասեան. Թիֆլիս 1900. եր. 49 հտն. եր. 40 հտն:—Գեղարուեստ, հանդէս, № 2. Յար. Այամդարեան, յօդուած Լեւոն Մանուէլեանի:

թեցնում է նրա մինչ այն թմրած բանաստեղծական ոգին, և նա սկսում է երգել:

Երևակայութեամբ բաւական թոյլ, դադարներն երով աղքատ է Ալամդարեանը, իսկ ձևով դեռ յաճախ միջնադարեան. բայց և այնպէս անձնական կսկիծը դարձրել է նրան մեր՝ 19-րդ դարու գրականութեան առաջին երեսնամեակի միակ քնարերգուն, քրի գրութեան քնարի մէջ շինծուութիւն չկայ: Այն ինչ որ նա գրում է, ոչ թէ մեռած, մեքենայական ձևով սարքում է ինչպէս մի Քապաստալեան, և ոչ արուեստով յօրինում ինչպէս Միլիթարեան քերթողները. այլ իր զգացածն ու կրածը, իր վերաւոր սրտի հառաչանքն ու հեծութիւնը անկեղծութեամբ, ինքնաբուխ, պարզ ու անպաճոյճ առում է մեզ: Նա իւր իրական, անհատական կեանքի բանաստեղծութիւնն է անում, իւր սրտի պատմութիւնը գրում, սր և քնարերգութեան իսկական աղբիւրն է. որովհետեւ բաւական չէ միայն բանաստեղծ լինել, այլ հարկաւոր է և զգացած լինել. իսկ Ալամդարեանը իւր կնոջ մահը, իւր կրած զրկանքներն ու հալածանքը զգացել է իւր ընդր էութեամբ:

Բազմազան չէ Ալամդարեանի բանաստեղծութեան նիւթը, բայց նա ունի քնարերգութեան ամենամեծ թեմաներից երկուսը՝ սէր և մահ, և այս միացած մի սրտի մէջ, միաժամանակ զգացած և ի մի ձուլուած մի սիրած անկի համար: Սէրը նրա համար մի բնական պահանջ է, մի ատուածային շնորհք, որին ենթակայ են ոչ միայն մարդս, այլ և ընդր կենդանի էակները: Առանց սիրոյ կեանք չկայ: Սիրոյ առարկան ամենայն ինչ է աշխարհում («Քե տէր էի ես աշխարհաց»), և սիրահար սիրտը, անշղթայ կապուած, բնական անխուսափելիութեամբ ձգտում է միանալու նրան.

Որպէս ծուկն ի վեր քնապէս ձգի,

Որպէս նեան առ իւր նպատակ ընրի,

Որպէս ջուր վերուստ ի վայր սողոսկի,

Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝

Նոյնպէս սիրա, մարմին, իմ բոլոր հոգի

Քեզ բաղձայ, սէր իմ, քե վառի, մաշի:

Նոյն իսկ նրանից յաւիտեան բաժանուած՝ շարունակ աչքի առաջ ունի նրա պատկերը.

Աչք իմ միշտ առ քեզ պշնուն, սիրելի,

Հանդէս երկաթոյ, գերւոյ մագնիսի.

Զեմ երբէք ի քէն բաժան, տենչալի,

Նման լուսասէր խոնարհ ստուերի:

Մի անգամ որ նրա սիրտը նուիրուած է իւր սիրոյն, ան
այլ ևս մինչև կեանքի վերջը ոչինչ տեսնում իւր սէրից դե-
ղեցիկ. ոչ խառնի առաջին գեղեցկութիւնները, բացառանշում
է նա,

Առջեւ չեն այլ ինչ, բայց միայն սաղներ.

Դու՝ տիւ աննման, խիզ դռք՝ գիշեր:

Այս պատճառով և մի անգամ սիրողն այլ ևս չի կարող երկ-
րորդ անգամ սիրել.

Մի թոյնն է գեղթափ երկրորդեալ թունոյ,

Իսկ սէրն առաջին՝ է խոչ միւս սիրոյ:

Մի հոգի չէ ստրուել երկուց ներհակ կրից.

Մին սիրտ չէ մեհեան երկուց անհղ դից:

Մահն ևս նրա համար մի բնական դուրսութիւն է, որի դէմ,
կարելի է առել, շատ էլ չի բողբոլում մեր բանաստեղծը, և ոչ
քննում է, թէ ինչից է առաջանում և ինչ ոյժ է: Խորը հա-
յեացքով չէ թափանցում այդ առեղծուածի մէջ: «Անգութ
օրհասը» նրան պատկերանում է միայն «զօրէն անողորմ, ան-
հաշտ ոսոխի, ժանտ մարդասպանի», որ զրկում է մարդուս ծա-
նօթներից ու բնութիւնից՝ լեռներից ու հովիտներից, պայծառ
ճաղկափթիթ դաշտերից, և որ զրկել է իրեն յատկապէս իւր
աննման Մարգարտից: Էականը մեր բանաստեղծի համար ոչ թէ
ինքը մահն է, այլ մահի բերած այս զրկանքը, որ ճնշում, խոր-
տակում է նրան ոչ միայն հոգեպէս, այլ և ֆիզիկապէս.

Նրբ յիշեմ դանուն իմ սիրականի՝

Յօդուածք իմ դողան, սիրտ իմ սարոպիլի:

Կամ մի ուրիշ տեղ.

Համակ զօդուածք մարմնոյս հեծեն,

Սարսի՛ն՝ այլ դեռ քայքայեալ չեն.

Բիւր վա՛յ, ե՛րբ հանգիցեն:

Չկայ այլ ևս սիրած անձը, որի հետ խոստումն էր արել
«կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ ի միասին»։ Գիտէ, որ յաւի-
տեան չի գտնելու նրան [«Կորուսի զնա՝ այլ ոչ գտանեմ»],
բայց և այնպէս չի կարողանում հաշտուել իւր այդ վիճակի
հետ և բուռն կրքով կոծում, ջարդում է իրեն, լաց ու ար-
տասուքով որոնում նրան. կեանքը մաշւում է յոգւոց հանելով,
և հոգին քաղում միշտ մտածելով իր թանկագին կորուստի
մասին: Նա անմխիթար է, և անմխիթար մինչև կեանքի վերջը:

Դուք ի զուր ջանաք զիս մխիթարել.

Չկայ կէս սրտիս՝ զիսք ապրեցայց:

Իմ կեանք այլ չեն կեանք առանց փառելւոյս:

Իմ ցաւոյս դեղն է մահն, սիրելիք:

Եւ կենդանի թաղուելու, իւր սիրականի հետ մեռնելու բռն անչանքը երկար, շատ երկար իշխում է նրան. որովհետեւ նա չի կարողանում ազատուել մահուան թողած զօրեղ տպաւորութիւնից և այնպիսի կեանքով է ապրում շարունակ, որ մահից վատ է («կեանք այդպիսի քան մահ է չար»), — միշտ տանջուած, միշտ բեկուած.

Ի յաւերակս ի յամայնս

Ձեռն ի ծոցի շրջիմ դերիս,

Ո՛հ, խնդրեմ զհոգիս.

Սևափետուր, ակրատեսիլ

Բոլոց ձայնից ձայնակցիմ ես.

Վայ, վայ, այսպէս կեամ ես:

Եւ այս կիրքն ու զգայունութիւնն իշխում են նրա մէջ, յաճախ այն աստիճանի, որ նա ինքնախաբէութեան մէջ ոչ միայն փափաղ, այլ և յոյս ունի դեռ տեսնելու իւր կորուստը:

Յոյս իմ ի քոյ տես յաշխարհիս

Յարդ չառաչար խոշտանկէ զիս,

Մտացս աչաց միշտ երեիս,

Սիրոյդ հրով կիզես զհոգիս:

Այսպիսի դժբախտ դէպքերում անցեալի յիշողութիւններն ու տեսարանները մի մի մխիթարութիւն են լինում, և վշտահար սիրտը մի առանձին հրապոյրք է գտնում ապրելու զբանցով: Այդ դէպքում, ցաւը թէպէտև թարմ, բաւական մեղմացած է լինում և չի կլանում ամենայն ինչ բռնանալով բանաստեղծի հոգու վրայ և թոյլ չտալով նրան, որ, այսպէս ասած, մի տեսակ հեռու քաշուած, առարկայաբար նկարագրէ իւր կիրքը: Մեր բանաստեղծի առաջին երգերի մէջ, գրած 1821 թ. օգոստոս ամսին, երեւի կնոջ մահից քիչ յետոյ, իշխում է զգայունութիւնը. զրանք մորմոքուող սրտի ողբ ու աղաղակ են միայն. մինչդեռ զրանցից վերջինը՝ «Յերկու ձեռին երկու մոմ», գրած նոյն թուի սեպտ. 1-ին, գրաւիչ է իւր մեղմիկ դեղեցկութեամբ: Այստեղ բանաստեղծը մի վայրկեան կտրուում է իւր ներկայ վիճակից և ապրում է անցեալի ամենից հրապուրիչ ժամանակամիջոցով: Նրա աչքին պատկերանում է իւր նշանադրութեան տեսարանը: Նա մոռանում է այրու դառնագին թառանչները և պատանեկական յափշտակուող խանդաղատութեամբ տեսնում է, թէ ինչպէս ամօթից վարդ կտրած

կոյսը պարկեշտ, երկու ձեռքն երկու մոմ, իրեն առաջն է դուրս գալիս աղջիկների ու հարսների բազմութեան միջից ինչպէս մի հրեշտակ՝ մարդարտափայլ մարմնով, վայելուչ հասակով, քրքմադոյն երկայն վարսերով և զմայլելի աչք ու ունքով: Նրա սքանչելի տեսք ու խօսուածքի վրայ սիրտն սկսում է դողդողալ, և ինքը հիացած՝ մոռանում է աշխարհն ու մի տեսակ մեղմ արճեցութեան մէջ ընկած՝ մի նոր կեանքով է սկսում ապրել:

Յերկու ձեռքն երկու մոմ՝

Ինձ ընդ առաջ ել յիւր տան.

Մի՞ հարցանէք ո՞վ էր նա,

Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ:

Ամօթն զնա վարդ արար,

Ես հիացեալ դարձայ քար.

Այն զի՛նչ օր էր և զի՛նչ ժամ,

Յորում տեսի ես կեանք նոր:

Լիաճրագ յայնմիկ տան

Ի մարդաշատ բազմութեան,

Ի մէջ աղջկանց և հարսանց

Յոտին կայր ոմն անդ յանկեան:

Այն օրիորդն էր պարկեշտ

Ինձ պատահեալ առ դրամբ տան.

Ձոգիս գրաւեաց յիւր ի սէր,

Ի նմա տեսի ես կեանք նոր:

Մարդարտափայլ մարմինն էր,

Հասակն էր յոյժ վայելուչ.

Ձոտիւքն իւր վարսք քարշ գային,

Ի դոյն քրքմոյ փայլէին:

Դիմացն շքեղ երեւոյթ,

Յօնից, աչաց, այտից գեղ,

Շրթանց լեզուին համ անոյշ՝

Խոստանային ինձ կեանք նոր:

Ա՛խ, ասացի թմրեցայ,

Սիրտս սկսաւ դողդողալ.

Ձաշխարհ համայն մոռացայ,

Ի գեղ կուսին ապշեցայ:

Եւ քանաստեղծը բախտաւոր է, որ իրեն այդ կոյսի փեսան են անուանում. բախտաւոր և ուրախ է, որ ինքն այդ կոյսի մօտ է. քայց աւա՜ղ, միայն մի վայրկեան: Ներկան, որ ախ ու վայ է գիշեր ցերեկ, դարձեալ շուտով կանգնում է նրա առաջ իւր բոլոր թախծալից ծանրութեամբ, և նա զգում է աշխարհի

ունայնութիւնը և իւր ամենագեղեցիկ բանաստեղծութիւնը
վերջացնում է միջնագարեան երգիչներին յատուկ մի խրատով.

Նանրախորհուրդ ազգ մարդկան,
Շատ մի՛ սիրեր դու զաշխարհ.

Նա թշնամի է անգութ,

Չար քան զքարը մահաթոյն.

Յանցիւ սիրոյ զբեղ կարթէ,

Ի հազը անել ըմբռնէ.

Ապա զսիրոյդ առարկայ

Ի քէն արագ կողոպտէ:

Երկու տարի յետոյ, 1823 թ. Ալամդարեանը Մոսկուայից
վերադարձած է Աստրախան, ուր նոյն թուի օգոստոսի 21-ին
գրում է իւր «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց», մի փոքրիկ,
զբամտաիկական ձևով յօրինած քերթուած, որի մէջ հայրը գորո-
վանքով՝ որբերի հայր Փրկչին է յանձնում իւր երեք աղջիկներին,
իսկ ինքը կամենում է գնալ հեռու, անծանօթ աշխարհ որոնե-
լու իւր կորուստը: Հանգիստ չէ գեռ. նրա հոգին և երկար սուգ-
ու մորմոքի մէջ լինելով՝ վերջապէս ընկճուել, յուսահատութեան
մէջ է ընկել. նա, ինչպէս երևում է, անձնասպանութեան մասին
է մտածում: Չկայ այլևս նրա կեանքի կէտը և ի՞նչն է կապում
նրան աշխարհի հետ: Աղջիկներից մէկը, փոքրը, անմեղութեամբ
չի հասկանում հօրը և հօրից անբաժան՝ նրա հետ լինել է մի-
այն ցանկանում. միւսը հասկանում է, որ հայրն իրենց մօրն է
ողորում անմոռաց. իսկ երրորդը միաժամանակ և մխիթարում
է նրան, որ չսգայ, և ի՞նչպիսի փափկութեամբ.

Զիս ո՛ սիրեսցէ՝ զկատեացս քո թշուառ՝

Թէ զբեղ Տէր տարցէ յիւր երկնից գաւառ:

Փոքրիկ որբերի այս գութը, ծնողական սէրն ահա՝ բարբախ-
տաբար զօրանում է հօր սրտում, և Ալամդարեանը վերջ չի տա-
լիս իւր կեանքին:

Շուտով նա Թիֆլիսի առաջնորդ Ներսէս եպիսկոպոսից
հրաւէր է ստանում գալ Թիֆլիս իւր հիմնած դպրոցին վերա-
կացու, այսինքն կառավարել լինելու: Ալամդարեանն ընդու-
նում է հրաւէրը և 1824 թ. աշնանն արդէն դործի գլուխ
է կանգնում և վեց տարի (1824-ի դեկտեմբերից մինչև 1830
օգոստոս 1) վարում է նորաբաց դպրոցի ղեկավարութիւնը
բեղմնաւոր աշխատանքով: Նա է իսկապէս կազմակերպում
դպրոցը, թէ իբրև տեսուչ և թէ իբրև ուսուցիչ հոգի ու շունչ
տալով իւր աշակերտներին, որոնցից յետագայում շատերը
նշանաւոր են լինում, ինչպէս՝ Ստ. Նազարեան, Խ. Աբովեան և
ուրիշները:

Այստեղ Ալամդարեանը աշխատանքի մէջ կարծես մի առ-
ժամանակ մոռանում է իւր անձնական մեծ վիշտը և տար-
ուելով շրջապատի սգում՝ գրում է կրօնական բովանդակու-
թեամբ ոտանաւորներ, իսկապէս աղօթքներ («Աղօթք», «Աղերս
առ ամենօրհնեալ Տիրամայրն»), որոնք իրենց ձևով շատ էլ բարձր
չեն ժամանակակից Փէշտիմալճեանի աղերսներից։ Բայց որ գըլ-
խաւորն է՝ նա ոգևորուած է ներսէսով և դպրոցական գործով,
որոնց և նուիրում է՝ մի երկու ոտանաւոր, սակայն դարձեալ
ժամանակի սովորական ճարտասանութեամբ։

1827 թ. ներսէսը գնում է ռուս-պարսկական պատե-
րագմի դաշտը, Հայոց կողմերը։ Բոլոր արեւելեան հայերը գե-
րութիւնից փրկութիւն էին տեսնում այդ պատերազմի մէջ,
և մեր բանաստեղծը արձագանգ տալով այդ ընդհանուր ոգևո-
րութեանը՝ գրում է իւր «Տեսիլ»ը, որ իւր ժամանակի այդ սգու
առաջին արտայայտութիւնն է։

Յաղջամուղջ գիշերի, ի տեսլեան տխրագին,
Յարուցեալ թափառիմ՝ յանծանօթ ի դաշտին։
Ընդ ինև ոչ ուղի, ոչ շաւիղ երևին,
Ընդ կապոյտ քօղ երկնից սեւթոյր ամպը կուտին։
Սիրտ իմ, միտք յայլանդակ ի կարծեաց խիստ յուզին,
Յակամայս զիս մղեն առ կատար մի լերին։

Այդ լեռն երկնահաս Արարատն է։ Բանաստեղծն ապահով
բարձրանում է վեր, ուր կազմում է զուարթունների վեհ
ատեան։ Հրեշտակը փողում է սաստկաձայն։

Խմբեսցին աստ, գոչէ, բոյլք հոգւոց լուսաճեմ,
Որք վարուք և արեամբ և քրտամբք ուղիսաճեմ
Ուռգեալ զՀայաստան՝ արարին նոր եղեմ։

Բարձրանում է փոթորիկ ու ամպրոպ. ապա լռում, խա-
ղաղում է ամեն ինչ. փչում է մեղմաշունչ հովը, և հրեշտակ-
ներն օրհներգութեամբ գալիս է Առտուած, և մեծ ատեանը
լսում է նրա վճիռը։

.... Մերկասցի՛ քուրճ սգոյ Հայաստան,
Պճնեսցի՛ յիւր շքեղ ոսկեխայտ պատմութեան,
Լուսասցի՛ յարտասուտաց դարաւոր տրտմութեան....
Քարասիրտ, ռիւսերիմ, խորամանկ, անպիտան
Թշնամիք եղկելոյս առ ժամայն բերկրութեան՝
Պրկեսցի՛ն ի կապանս անաղատ գերութեան,
Մատնեսցի՛ն շարաշար անվախճան նեղութեան։

Եւ նա հաւատացած է, որ «հինաւուրց օճեալը», այսինքն եփ-

քեմ կաթուղիկոսը, պիտի դառնայ իւր դահը ներսէսի վրայ յենուած և

Հայաստան զառամեալ առնովաւ մանկասցի,
Դարն ոսկի մուացեալ՝ արդէ կրկին յայտնեսցի,
Սեռն Հայկայ յանաղարտ խնդուծիւն զմայլեսցի:

Սակայն Հայաստանի մանկանալու, «Մանուկ Հայայաստանի» գաղափարն այլևս չի զբաղեցնում նրան, որովհետեւ նա իւր անձնական զգացմունքի երգիչ էր և ընդունակ չէր նոյն գեղեցիկութեամբ և ուժով հաւաքական զգացումներ երգելու. ուստի և սառն և արուեստական են հնչում նրա՝ այդ նիւթին նուիրած տողերը, որոնց մէջ և Ս. Գրքի ազդեցութիւնն է երևում:

Ներսէսը 1828 թ. օգոստոսին հեռացւում է Քեսարաբլիա, և Ալամդարեանը դպրոցի տեսչութիւնը յանձնելով Յակոբ Զրրպետեանին՝ ինքը մնում է միայն դպրոցի խնամակալների մէջ: Մի տարի յետոյ օսկայն նա դարձեալ իւր վրայ է առնում դպրոցի տեսչութիւնը, բայց այլևս երկար չի մնում այդ պաշտօնում: Ներսէսի թշնամիները նրա քաջակայութեան ժամանակ զօրանում են, և վերջապէս Ալամդարեանը պարտուելով դրանցից՝ իբրև Ներսէսի կուտակից հալածանքի է ենթարկւում և կոմս Պասկեւիչի պահանջով նոյն իսկ արքունում է Հաղբատի վանքը: Այստեղ ծանր փորձութեան է ենթարկւում երիտասարդ վարդապետը, — նա այդ ժամանակ արդէն վեղար էր ընդունել, — երկարատեւ հիւանդութեամբ և ամեն տեսակ նիւթահան և քարոյական գրկանքներ կրելով. բայց հոգու արիութեամբ տանում է ամեն նեղութիւն:

Հաղբատում, անապատի ամայութեան մէջ դարձնում է նրա հին, թագցրած, բայց ծխացող վիշտը, և նա մենակ մնացած ինքն իւր հոգու հետ՝ տեսնում է, որ իզուր աշխատել էր իւր մէջ մեռցնել իւր սէրը, որի «քաղցր վէրքերը» իւր միակ մխիթարութիւնն էին: Եւ նա սկսում է նորից երգել իւր սէրը, բայց այլևս ոչ առաջուայ աղատութեամբ. նա վարդ ու սոխակի հին այլաբանութեանն է դիմում:

Մոլորին իմ միտք, լեզուս պապանձի,

Բարունիլ զքէն ոչ զօրէ յայտնի, առ չարացն ահի:

Նրան բամբասում էին նոյն իսկ իւր այդ մաքուր զգացմունքներին համար.

Յիշել զքո անուն չիշխեմ, պապանձի

Յահէ նախանձոտ մարդոց դիւադէմ:

Բայց այդ ահն ինչ կարող էր կապանք դնել քանադաստեղծի

լեզուին. նրա սոխակը «լաց չառնէր երէկ. այսօր շատ ողբայ»,
և ողբում է նա ահամայ, ողբում է աւելի դառնագին, աւելի
թախծագին, որովհետեւ նրա սիրտն այժմ աւելի ևս խոցուած
էր: Ուստի և նա ի դուր

Բամէ զուշն ի կուրծս, տքնի հանդուրժել,

Անօրէն բախտէն զկիրս իւր հնազանդել.

Եղո՛ւկ, նա խաբի. չէ՛ կարող ժուժել.

Ուժգնութեան սիրոյն ո՛վ կարէ յազթել:

Եւ «վարդակորոյս» բանաստեղծն իւր Մարգարտի մահից ամ-
բողջ տասը տարի յետոյ դեռ նոյն նեարգայէն դրութեան
մէջ, նոյն թափով բացագանշում է.

Աւա՛ղ վիճակի անբաղդ սոխակին,

Ոյր կեանքն ի հնոցի սիրոյ տոշորին:

Մահ, ո՛ւր ես, ե՛կ, հա՛ս, օգնեա թշուառին.

Դու դառն ես այլոց, քաղցր ես անբաղդին:

Այս ժամանակի երգերից է անշուշտ և «Սոխակ ի հոգե-
վարս» (որի տակին դրած է 12 մարտի 1823 ի Հաղբատ, ան-
շուշտ սխալմամբ փոխանակ 1831-ի): Գարուն է բացւում.
չքանում են ձմեռնային չարաչար բուքերը. գալիս է քաղցրա-
շունչ օդն իւր սիրտիանքով. բնութիւնը, ծառ ու ծաղիկ զար-
դարւում են և մարդկանց հրաւիրում դուարձանալու, բայց
այդ կենդանութեանը հակադրութիւն է հիւանդ բանաստեղծի
սիրտը, որ ներկւում է արիւնով. «Աշխարհ խնդայ, ես միայն
եմ ի շիւան», ասում է նա: Մի անգամ միայն նա հոգւով
մարմնով դուարթանում է իւր «Անուրջքի» մէջ: Այս փորձիկ
բանաստեղծութիւնը Ալամդարեանի արուեստի կատարելու-
թիւնն է: Սկզբում նա կարճ, բայց կենդանի դժերով, պայծա-
ռութեամբ հանում է իւր տանջադին տխուր ու վհատ վի-
ճակը՝ անքուն գիշերից յետոյ անկողնում մտածելով շա-
րունակ իւր հիւանդ ու թշուառ կեանքի վրայ. բայց ահա
առաւօտեան արեւի զուարթ ցնցուղն ընկնում է ներս, և
բնութեան այս կենդանի խաղի մէջ մէկ էլ յանկարծ նա՝ կէս
քուն, կէս արթուն՝ լսում է իւր նազելիի ոտնաձայնն ու բար-
բառը, թէ ինչո՛ւ է մաշւում նա, — և տառապեալ միտքը հա-
ւատում է, թէ իրօք տեսնում ու լսում է իւր նազելին, և
թարմանում ու կենդանանում է: Ամեն ինչ բնական ու կեն-
դանի և առանց այլաբանութեան, և ամեն ինչ իւր իսկական
տեղում յարմար բառով ու պատկերով արտայայտած: Բարեբախ-
տաբար Ալամդարեանը, որ իւր ոտանաւորներն աները յաճախ

այնպիսի բառերով է սկսում, որ իւր անուան տառերը կադմեն, այստեղ այդ միջնադարեան սովորութիւնը գործադրել է տների կէսի վրայ, ուստի և սակալուած չի եղել շատ տներ գրելու և ճապաղելու իւր միտքն ու զգացումը:

Յառաւօտուց ի յանկողնի

Սէր նազելւոյս զիս խորովէր.

Անքուն գիշերն ես անցուցի,

Զի տանջէր զիս նորա պատկեր:

Լեզուս ցամաք, հոգւով զհաւ,

Տկար մարմնով կայի անկեալ.

Անուրջը անոյշք ի նինջ կիսատ

Զթաց աչօքս կային սփռեալ:

Միշտ մտատանջ, միշտ կաթսգին,

Ալէկոծեալ նաւու նման.

Դեղն իմ ցաւոց սէրն էր անդին,

Բայց չերևէր նորայն նշան:

Այգին ցնցուղ ցայտեալ յիմ տուն՝

Մերժեաց յինէն զմէզ բնոյն.

Բոտեմ զիմ ուշ, լսեմ զգոփիւն

Ոսնածայնի իմ նազելւոյն:

Երա՞ք է այդ, մ'նչեմ մեղմով,

Հոգւոյս տանջող և յսրթնութեան.

«Աւանդ գլխոյս, գոչեաց ճեպով,

Ընդէ՞ր մաշիս, որաիս իշխան»:

Նազելւոյս ձայնն յունկն իմ հնչեալ՝

Յիս արժարժեաց զկայծ կենաց.

Յնծութիւն ինչ հանրածաւալ

Հոգւոյս մարմնոյս իոկոյն տիրեաց:

Բայց ինչքան էլ մեր բանաստեղծը իւր ցաւերի դեղը անդին սէրն է համարում և ինքնամոռացութեան համար անձնատուր է լինում իւր հին սիրոյ յուշերին, այդ սէրը մենակ չէր կարող փարատել նրա մեծ վիշտը: Աէրը միայն վայրկենական սփոփանք էր տալիս, որի ետեւից զալիս էր աւելի մեծ բռնութեամբ իւր լքուած վիճակի դառն զգացումը: Ամեն ինչ յիշեցնում էր նրան, որ ինքն, այն «գործունեայ, բարեխիղճ աշխատաւորը», արողրական էր այժմ հալածուած ու զրկուած. որ իրեն նեղիչները դաւեր են սարքում իր դէմ, և դուցէ անդարձ կորած է: Եւ քարնանը, ապրիլի վերջերին, երբ ձիւնաթաղ դաշտերը զարդարւում են, նա փոխանակ հրապուրուելու

ընդթեան գեղեցկութեամբ՝ աւելի ևս դառնանում է սրտով
և անիծում նոյն իսկ իւր ծննդեան օրը:

Յամառվերջն ապրիլի զպատուհանս բացի,
Զծիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եւանդունք զայսոս իմ այրեցին,
Զիմ անգարծ գերութիւն յուշն իմ մօտ ածին,
Լեղուապէս դառնացան քիմք վհատ հոգւոյս,
Զմրեցան զգայարանքս, հատան եւք շնչոյս:
Ափսոս ինձ, աղացի բիւր անգամ յայն օր,
Շատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր:

Բանաստեղծի ցաւը սոսկալի է. նա մարմնով մաշւում է
իւր վշտից աւելի քան իւր հիւանդութիւնից: Յուսահատ-
ութիւնը երկրորդ անգամ տիրել է այդ «հէք այրու» զգա-
յուն սրտին, և հարկաւոր էր մի հզօր ոյժ, որ այս անգամ ևս
փրկէր նրան: Եւ փրկւում է նա իւր ջերմ հաւատքով, որ ունէր
առ Աստուած: Յաւի ծանրութիւնից նա խոր քնի մէջ է
ընկնում և տեսնում է ոչ թէ իւր նազելիին, այլ կենսածին
Տիրամօրը, որ իւր ձեռքով որպէս փոսից հանում է նրան: Եւ այս
երազը վերադարձնում է նրան յոյսը.

Աւանգ ինձ, նեղասիրտ կարճամիտ լալոյս,
Զիմրդ զիս կարծեցի կորուսեալ անյոյս:

Շուտով կատարւում է իսկապէս բանաստեղծի նախա-
զգացումը: 1831 թ. յունիսին Ներսէսի միջնորդութեամբ նրան
թոյլատրւում է դնալ Բեսարաբիա Ներսէսի մօտ. բայց բախան
այստեղ ևս չի ժպտում նրան.

Մինչև էր բուժեալ վերք սրտի իմոյ՝
Նոր վիշտք, նոր արկածք, նոր աղէտք սգոյ,
Նման կարկտածին թխալայոյզ ամպոյ՝
Տեղացեր ի գլուխ թշուառս ծերոյ:

Յակոբի այս խօսքերով Խորայելի Ողբերգութեան մէջ,
ինչպէս և շատ բանով այդ Ողբերգութեան մէջ, բանաստեղծն
իսկապէս իւր սննանկան կեանքն է ողբում: Բեսարաբիայում
նա Ներսիսեան դպրոցի ինչ որ հաշիւներն պատճառով գժտւում
է Ներսէսի հետ և կարգւում է վանահայր Նոր Նախիջևանի Ա.
Խաչ վանքում:

Սկսւում է Ալամդարեանի համար մի նոր ցաւալի վիճակ.
նա իրեն անարդար կերպով հալածուած ու զրկուած է համա-
րում և սրտի խորքից բողոքի ճիւղեր է արձակում յօրինելով,
երբեմն սաղմոսների նմանութեամբ, սքանչելի աղօթքներ, որոնց

ամեն մի տողն ու բառն անձնապէս զգացուած են, ուստի և ազդու: Դրանք հաւատացողի ջերմ սրտի արտայայտութիւն են, բուն թափով գրուած, որոնց մէջ նա ուրիշ ապուէն չի գտնում իւր թշնամիներից ազատուելու համար, բայց եթէ աստուածային գթութիւնն ու օգնութիւնը:

Լարեն ինձ թակարդ ժանտից ջուր անեղ,
Յիմ կորուստ բերին, իբր անհատ հեղեղ...

Աման յեղկելիս զմահաթոյն քարբից,
Ընդ լաց իմ բերկրին, ա՛խ, ո՛ւր դիմեցից...

Մորմոր, օուդ, կսկիծ և երկունք մահուան,
Անթիւ տառապանք զինև շրջեցան,

Ապշեցայ, ցնորեցայ...

Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,

Յո՛ւ և դնացի՝ միշտ գտի դարան.

Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ գերծայ...

Այսպէս է նկարագրում այդ բախտից հալածուածը ինքն իւր կեանքը, կողկողազին դիմելով Փրկչի խաչին, որ իրեն ողորմելով՝ ազատի իւր թշնամուց.

Նորոգեա՛ւ զիմ կեանս, զիս ի հաղբից հան.

Ոչ երթայց ի քոց դրանց՝ չե առեալ զիմ խնդրուած:

Այդ մի քանի աղօթքներով (Կողկողանք առ խաչ Փրկչին: — Սաղմոս ԾԵ. — Սաղմոս ԺԼԹ. — Ապաշաւ:) Ալամդարեանը մի անգամից բարձրացնում է մեր կրօնական սառն բանաստեղծութիւնը, ցոյց տալով, որ, ինչպէս ամեն քնարերգութիւն, աւելի ևս կրօնականը, նոյն իսկ եթէ սաղմոսներից է տաղաչափուած, պէտք է յօրինուի միայն անձնապէս զգալուց յետոյ և նիւթ պիտի ունենայ մարդուս ապրածը, և ոչ թէ սարքուի մտածած ճարտասանութեամբ:

Բանաստեղծը Ա. Խաչ վանքում իւր ամենագեղեցիկ հասակում իւր զարգացման ծայրն է հասել և թէպէտ և հալածուած ու ճնշուած, բայց մեծ յոյս ունի, որ ինքը շուտով պիտի «տմարդկների» ձեռից ազատուի և ապրի նորոգուած հոգւով: Բայց աւա՛ղ բախտին: 1834 թուի մայիսի գիշերը աւազակները մտնում են վանքը կողոպտելու, և մահացու վիրաւորւում ու մեռնում է նա: որ երկու ամիս առաջ գրում էր՝ «Յո՛ւ և դնացի՝ միշտ գտի դարան»:

Այսպիսի ցաւալի վախճան է ունենում մեր 19-րդ դարու առաջին քնարերգուն, որ դժբախտ է լինում իւր բանաստեղծական կեանքի ամբողջ ընթացքի մէջ, ուստի և գրեթէ ոչ մի ուրախ տող դուրս չի եկել նրա գրչի տակից: Նա շատ բան չի արտադրել, բայց ամեն ինչ իւր ախուր հոգուց է գրել: Հենց այդ պատճառով և կենդանի է, սրտառուչ ու գրաւիչ: Ցաւել պէտք է, որ նրա բանաստեղծութիւնները շատ ուշ, մահից յետոյ տարի յետոյ միայն, մահուան յիսնամեակի առթիւ, հրատարակուած են իւր թոռ (աղջկայ զաւակ) Քե-րովրէ Պատկանեանի ձեռով: